

Ամբաս Բիրուս  
Խմբագրութիւն «Փիիհնիկ»ի  
Ալեքսանդրիա



S. Burat  
Rédaction «PUNIG»  
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱԶՄԱՆ

Ղր. 45  
ՍՈՐԵԿԱՆ... 45  
ՎԵՅՍՄՍԵՍՅ 25

Ֆր. 15  
ՍՈՐԵԿԱՆ... 15  
ՎԵՅՍՄՍԵՍՅ 8

ԲԱԺՆԵԳԻՆԸ  
ԿԱՆՆԻԿ Է

404400  
ՍՈՐԵԿԱՆ ԲՈՂ. 6

# Փ Ի Ի Կ Ն Ի Կ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 7 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1901

ԹԻԻ 30

## Մ Ա Յ Ա Գ Ո Յ Ժ

Վեներելի Ս. Ղազարու Վանկէն  
գանազան տղեր Նոյեմբեր 22ին Բա-  
ուած հեռագիր մը կը գումէ մահը  
ՀԱՅՐ ՂԵՒՈՒԴ ԱԼԻՇԱՆԻ, որ կարճատե  
հիւանդութեմէ մ'եսք վախճաներ է 83  
տարեկան հասակին մէջ:

Այս գոյժը կուգայ այն եղանակի  
Մենասանէն, որ երեք ամիս առաջ  
ա՛յնքան շեղութեամբ կատարուեցաւ  
Միաբարայ հիմնարկութեան երկերիւ-  
ամեակը, աւելի շուր ու աւելի փայլ  
առած՝ ցանկալի ներկայութեամբ ՀԱՅՐ  
ԱԼԻՇԱՆԻՆ, որուն այսօր կարուսք կող-  
բայ Վեներելի հետ բովանդակ Հայ-  
ութիւնը:

Մեր խորին ու անկեղծ վճակ-  
ցութեան արտայայտութիւնն ընելէ յե-  
տոյ Ս. Ղազարու Պատկ. Միաբանու-  
թեան, եւ մաղթելէ յետոյ որ իր ծոցէն  
նոր Ալիսան մը յառնէ, կ'սպասենք

անձկանօք Պատ. Բագմալէպին մէջ  
հրատարակութիւնը ողբացեալ ՆԱՀԱ-  
ՊԵՏԻՆ կենսագրութեան:

## Ք Ր Ո Ն Ի Կ

— ԿՐԵՏԱԿԱՆ ՀԱՐՅՐ. — Նոյ. 20 ին Կ.  
Պոլսոյ ռուսական, անգլիական եւ իտալական  
դեսպաններն ու Ծրանսական գործակցարք  
խորհրդակցական ժողով մը գումարեցին Իր-  
նելու համար գանգատները ժօրժ իշխանին՝ ի  
մաղին բազմաթիւ դժուարութեանց զորս յա-  
րուցած է օստ. կատարութիւնը կրեւսցի  
հպատակներուն դէմ ու խորհրդակցելու հա-  
մար այս դժուարութիւնները հարթելու մի-  
ջոցներուն վրայ: Վերջերս հասած հեռագրէ  
մը կը հասկցուի թէ՛ տեղիները ժօրժ  
իշխանին պատշտակարարութիւնը նորոգած են  
երեք տարուան համար:

— ՆՈՐ ՄԵԾ - ԵՊԱՐԲՈՍ ՍԱՅԻԴ ԲԱՇԱՅԻՆ  
անուանուի՝ Թանի պոլսական ընդարձակ  
քրթակցութեան մը նիւթ տուած է. «Սուլթա-  
նին այս որոշումը, կ'ըսէ քրթակցը, ուր  
օրուան խորհրդածութեան մը վերջ տրուած,  
կարեւորութեան զուրկ չ'է, ու ասոր առիթ  
կ'ըսէ են ո՛չ միայն երկրին ժամանակէ մ'ի

վեր սիրով ընդհանուր կացութիւնը, այլ եւ Ֆրանգո-Փուրվ վերջին միջադէպը: Սուլթանը վերջապէս հասկցաւ թէ՛ Տերութեանց անհամաձայնութիւնն ա՛յնչափ շեշտուած չէ եղեր, ո՛րչափ իրեն հաւսացուցած էին ուստի ապացոյցն ալ ա՛յն է որ Ֆրանսան կրցաւ երկրին մէկ կտորը գրաւել առանց Եւրոպայի կողմէն շահութեան բառ մը լսուելու: Ասի խորհել տուաւ Սուլթանին, եւ որովհետեւ կայսրութեան սնտական սազնաւոր կրնայ ետեւէն բերել նոյն տեսակէ ուրիշ միջադէպեր ալ, շահ իրաւացի կերպով խորհեցաւ թէ՛ ասեմն եր կառավարութեան գրչուիք դնել, ու Եւրոպայի ներկայութեանը, միակ մարդը, որ Իզմիրի արդի վալի Քեամիլ բաշային հետ կրնայ իրաւամբ պահանջել Պէտական մարդ, ու սիսդոսը: Զի Սայիտ բաշա մէկն է անոնցմէ. շահ խելացի է, ծանրախոհ, եփուն, գործերու մեծ փորձառութիւն մ'ստացած է, ունի կամք ու կորով, հաստատ նկարագիր մը, ու ձեռներեցութիւն. ու ամենէն աւելի, պարկեօտ է: Միակ թերութիւնը, որ կարելի ըլլար յանդիմանել անոր, երբէք վերադառնալ չ'ուզելն է արդէն տրուած որոշումի մը, նոյն իսկ եթէ անոր անհրաւիրութիւնն ալ ապացուցուէր: Ըսե՛մք թէ պէտական մարդուն իշխանութեան գլուխ անցնելովը կրնանք սպասել հայաբախանութեան փոփոխում մը: Ասոր հաւսացողները կը խաբուին: Օսմէ. քաղաքականութիւնը պիտի չը փոխուի, պիտի չ'ըլլայ ո՛չ անգլիական, ո՛չ գերմանական, ո՛չ Ֆրանսական, ո՛չ ռուսական, ո՛չ ալ ուրիշի. պիտի մնայ միտ ինչ որ եղած է. իսկապէս բուրք քաղաքականութիւն մը, դարձող, իր շահուն համաձայն, Եւրոպական տերութիւններէն դէպ ի՛նչ կը կամ միւսը: Միակ բանը, որուն համար պիտի ինքանք ու գոր պիտի յուսանք, ՚պս է որ Նոր Մեծ-Վեզիրն ունենայ բաւական ձեռներեցութիւն անյապալ լինցնելու համար վարչական ընթացիկ գործերը, որոնք, տարիներէ ՚ի վեր, ցաւալիօրէն կը տառաւորին: Այդ չորրորդ անգամն է որ Սայիտ բաշան Մեծ-Վեզիր կ'ըլլայ: Վերջին անգամ այս պատճօնին կանչուեցաւ 1895 Յունիսի 8 ին. չորս ամիս ետք, Հոկ. 3ին, իրեն յաջորդած էր Քեամիլ բաշան: Այդ բուականէն ՚ր վեր բացն էր ու կը բնակէր Նեան Թաշի իր սպարանքը: Հաս պիտի չ'իլլէր 1896ի ամառ անձնական միջադէպը, երբ պէտք գագայած էր ապաստանելու անգլ. դեսպանատնը. միջադէպ, որ քիչ տեւեց ու հետեւանք

մը չուցեցաւ: Զինք Մեծ-Վեզիրութեան բարձրացնող Հաքքը հետեւեալն է.

«Իմ Մեծանուն Վեզիր Սայիտ բաշա.

Ռիսխար բաշայի մահուանը հետեւանքով, նկատելով Ձեր փորձուած ասակորթիւնն ու հաւատարմութիւնը, Ձեզի կը վրասակիմ Մեծ-Վեզիրի պաշտօնը»:

Թո՛ղ Աստուած յաջողութիւն շնորհէ...:

— Տ. ԳՈՆՍԴԱՆ, Ֆրանսական դեսպանը Նոյ. 29ին իր պատճօնական այցելութիւնն ըրաւ Սուլթանին:

— Օր. ՄԹՕՆ. Թրքական աղբիւրէ հետագիր մը վերջերս կը ծանուցանէ թէ՛ Միս Սթօն, չարչարանքի չը կրնալով դիմանալ, մեռած է: Աւագակները ցրուեցան:

Սակայն այս յուզիչ լուրը կը կարօտի սուղութեան:

— Էլ ՕՐՈՒԱ ԷՒ ՈՒՍՄԳԱ Միւսիւլման Բարեգործական ընտրութիւնը մտադիր է ձրի դպրոց մը հիմնելու Ռափէ:

— ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅՈՅ ԲԱՐԵԳ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ արհարանը, որ ժամանակէ մ'ի վեր փակուած էր, այս անգամ աւելի շեղ ու ընդարձակ, վերաբացուած է, Օրեղ նշիվիյաչի վա՛ր յարկը: Յուսալի է որ նոյն ընկերութիւնը, վարչութեան փորձառու եւ գործունեայ անդամներուն ջանքերովը, պիտի հետզհետէ աւելի յառաջադիմէ ու հարստանայ:

— ԳԱՀԻՐԷԻ ԳԱՒԱՌ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ, որ քանի՛ քանի շաբաթներէ ՚ի վեր կ'ըստասուէր, դեռ չէ՛ գումարուած. ո՛րչափ ցանկալի էր որ ժամ առաջ գումարուէր այն ու վերջ մը տրուէր Գալստեան վարժարանի վարժուհիական ու հոգաբարձուական հարցերուն, որ չափէն աւելի տեւեցին:

— ԳԱՀԻՐԷԻ ԴԵՐՉԱԿՆԵՐՈՒ աւելի տեւեցնելուն գործադուրը դեռ չը վերջացաւ, հետզհետէ աւելի կը ծանրանայ դեռականներուն կացութիւնը, որ կ'երեւի թէ պիտի տեւէ ցորչափ յամառ ցուցարարներուն լիուլի գոհացում չը տրուի:

— ՏԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՌԻ ՍՈՒԼԹԱՆԸ. —

Դուռը մօտերս տերութեանց ուղղեալ ծանուցադիր մը պիտի հրատարակէ բողոքելով օտար միջամտութեան դէմ՝ օսմ. կայսրութեան գործերուն մէջ, պատրուակով թէ՛ այդ միջամտութիւնն արգելք կ'ըլլայ Սուլթանին՝ մտնելու Պերլինի դաւնագրով պահանջուած բարեկորդումները:

— ՆՈՐ ՎԵՋԻՐԸ հակառակ է երկրին ներքին գործերուն մէջ օտարի խառնուելուն, ուստի համար է որ անցեալին մէջ յամառօ-

րեն դեմ դրած է եւրոպական համաձայնութեան կողմէն բուրժ կառավարութեան պահանջուած բարեփոխումներուն: Այս է ահա՛ գաղտնիք Սայիտի Մեծ - Եպարտութեան կանչուելուն. այնպիսի պարագայի մը մէջ ուր Սուլթանը կը վախճայ եւրոպական ո՛ր եւ է գործողութեան, աչքի առջեւ ունենալով իր նահանգներուն անիշխանական կացութիւնը: Ապս - Իւլ - Համիդ կը կարծէր թէ *Քիւլիւմ Սայիդ* միայն պիտի կրնայ արգիլել այդ ապեր, կամ թէ՛ եթէ պատահի, անոր առջեւն առնելու միակ կարող մարդն է անի: Քիւլիւմի ֆաղափարական հայեացները մեծ մասով Սուլթանին ընդունելի են, որովհետեւ Սայիտ անապատս պահել կուզէր «*հին բուրժ*» ի կառավարական ձեւը. կասալի թեմամբն է Միսհադի սահմանադրական գաղափարներուն, որոնց ներկայացուցիչն է այսօրուան Սրիսաւարդ Քուրբեռուն կուսակցութիւնը: Մինչեւ այս կէտերը համամիտ է Սայիդ՝ Համիդի, բայց կ'ասէ լրեստներն ու հակա - լրեստները, որոնց երեսն կը ծագին շուս մը չարիքներ, կամայական բռնութիւններ: Սայիտ չուզեր նաեւ որ Քուրբեռն ու Ալբանացիները մասնաւոր ու բացառիկ շնորհներ վայելեն. չուզեր որ կաշառքն ու երկրին շահերուն նկատմամբ ցոյց տրուած անհոգութիւնը դեռ շարունակեն:

Սակայն, կը մտնանք այս ամենէն վերջ յիշել թէ՛ Նոր Վեդիրը Հայերուս ուխտեալ թեմային է. *Քուրբ Լոպանօֆը*, որ շարդերու ֆաղափարականութեան սակ սիրահարն է:

— ՄԱԿԵՒՈՆԱԿԱՆ նոր Գօմիթէն, նախագահութեամբ ՔրօՅ. Միխայելովսիի եւ գօրավար Զոնչեօի ու ընդ պատշաճութեամբ Ֆերիանտի իշխանին, մօտեւ Դրան ու Սուլթանին հետ պիտի բանակցութեան մտնեն երբ Մակեդոնիոյ մէջ ընդունուելիք բարեփոխումներուն նկատմամբ: Իշխանը, եթէ հիշող են գրոյցները, մօտեւ անձամբ Կ. Պոլիս պիտի երթայ այս բանին համար:

Գօմիթէն պիտի ստանան երբ չը դիւրացնել կամ չ'զրգուել Մակեդոնիոյ մէջ ո՛չ մի յեղափոխական յուզում, եթէ բարեփոխումներն անմիջապէս ձեռք բերուին:

Նախկին գօմիթէն, — որուն նախագահն է ՍարաճօՅ — ակնյայտի եւ հրապարակաւ կը պատրաստ ասպարեութիւն մը Մակեդոնիոյ մէջ. եթէ նոյն իսկ նոր գօմիթէն հետ գտնուած ալ չ'ըլլար, դարձեալ չը պիտի հասուէր անոր նպատակին հետ:

— ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒ

ԹԻԻՆՆ ՈՒ ՀԱՅԿ. ՀԱՐՑԸ. — Միջագային ընկերվարական դիւանին քաղաքական - ուղեբնին 'ի գործադրութիւն, զանազան երկիրներու ընկերվարական կուսակցութեան խումբերն ու ընտրեալները կոչեւ խմբագրած են արդէն ու գումարումներ կազմակերպած:

Վիեննայի Ընկերվ. Գօմիթէն ազդու բանաձեւ մը փութարկեց Հայոց 'ի նպատ: Հոլանտա, Հ. Վան Քոլ ֆաղափարցի, Ընդհ. Նահանգներուն երեսփոխանը, որոշեց հարցում ընել Նախարարապետ Տօգգ. Քուիլբըրի, որ դրժուար թէ կրնայ ուրանալ իր ընդդիմադիր կողմը գտնուած ասեմ պատշապանած գաղափարները, հիմայ որ իշխանութեան գլուխն է:

Դերմանիս, այս շաբաթուան մէջ իսկ պէտք է դիմումներ եղած ըլլան ընկերվարական ընտրեալներուն, որոնք երկար ասեմ պիտի չը յամտին մնա Լիբրալներու սխալին մէջ ու կարծեմ թէ՛ Հայերը կը ջարդուին Ռուսիոյ սիրոյն:

Ֆրանսա, վերջապէս, Ժ.սն Ալբանան ու Մարսել Սմայա ֆաղափարցիներուն արդէն վիճաբանուած հարցապրնդումէն գատ, ինչպէս նաեւ Կիւթալ Ռուանէլիներն, որ մօտեւ պիտի տեսնուին, առաջին գումարում մը եղաւ Նոյ. 19ին ԳիՏՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ հիւրանոցին մէջ, *Գօլեգրիվիայ* ուսանողաց խմբին նախաձեռնութեամբ: Մարսել Սմայա ֆաղափարցին պարզեց հոն՝ պատշաճանելու այս երկու եղանակները. Կառավարութիւնը պատրաստուել որ եւրոպական տէրութիւններէն խնդրէ Պէրլիի դաշնագրին գործադրութիւնը. Կառավարութեան վրայ հարկաւորապէս ներգործել ամեն օր անոր հաղորդելով հանրային կարծիքը, որ արդէն ընդվզած է:

Վերջապէս ընկերվ. կուսակցութեան Կեդր. Գօմիթէն դեռ նոր բանաձեւ մը փութարկեց, հրախրելով դաշ-

նակցութիւններն ու խումբերը՝ կազմակերպել ամեն յետ հրապարակային գումարումներ ուր պիտի ծեծուի Հայկական Հարցը:

Այս ամենը միտքարական է. եթէ Երոպական սերութիւններն անզգայ հանդիսատեսներ են Հայաստանի հոգեւարժին, գոնէ Երոպական ժողովուրդները կը խլրտին, ամեն երկիրներու խորհրդարանները պիտի ստիպուին զբաղիլ մեր հարցով: Սակայն, մենք ի՞նչ կընենք. հո՛ւ է հարցը...

— ԻՄՄՍՅԻՆ ՔԷՄԱԼ ՊԷՅ, նախաստեղծով արեւելեան գործերու վրայ մօտալուս պայքարը, Պրիւսիայէ 14 Նոյ. քիով նամակ մ'ուղղած է Հանրապետութեան, Խորհրդարանին ու Ծեակոյցի Նախագահներուն, ինչպէս նաեւ բազմաքիւ երեսփոխանաց: Այս նամակէն կարեւոր հասուածներ կը փառենք:

Նամակագիրը, ազատամիտ ու զարգացած ալբանիացի մը, կարծիք կը յայտնէ թէ հայկ. հարցին վրայ մղուելիք պայքարը կը շօշափէ անելի մարդկութեան ու արդարութեան փանթէ Երոպայի փողոսական շահերը, ու այդ պայքարին վերջնական ելիք պիտի ցոյց տայ թէ՛ Ֆրանսայի վերջերս Արեւելի մէջ ի գործ դրած փայլուն ազեցութիւնը պիտի կրնայ բարձրացընել այս ազգին պատին ու վարկը. թէ Արեւելի թուառ ազգերուն պահուած է դառն պատրանք մը: Ազնի Պէյը — որ անսարակոյս չը նմանի մեր կամապատես ու պատժանով պէյերուն — կը սարփողէ Ֆրանսայի փառաւոր անցեալը, կ'ողբայ Թուրքիայ նողկալիներեան, զպայուած բաղձութեամբ մը կը յիշատակէ վերջին Ֆրանսո-թուրք բազմադարդ միջադէպը, ու անոր ողորմելի վախճանը, որ կը սահմանափակուի մէկ երկու հպատակներու պահանջները կարգադրելու, փանի մը դրպրոցներ բանալու — որոնց ընթացաւարտները պիտի չ'կրնան ապրիլ այն

դժոխքին մէջ, ու պիտի ստիպուին արտասահման ապաստանիլ — մարդասպանին ձեռքով փանդուած վանկերն ու եկեղեցիները վերաշինելու, փանի մը կրօնային հիմնարկութեանց գոյութիւնը յարգել տալու անձուկ գոհացումին մէջ. միթէ ասի՛ Ֆրանսայի վարկն ու ազգեցութիւնը վերականգնել է մինչդեռ անդին, 30 միլիոնի բնակչութիւն մը, զանազան ցեղէ ու դաւանանքէ, կը կեղեքուի, կը խուսափուի ու կը խողովուրդուի. երկիրը կ'ամայանայ, երբեմնի մեծ կայսրութիւն մ'է դէպ ի կործանում կը գահավիժի. կէս դարու ու քառորդ դարու դաշնագրերէ կ'անարգուին. դաշնագրերէ, որոնց առաջինը — Բարիզի — կայսրութեան ամբողջութիւնն ու անկախութիւնը կ'երաւանաւորէր, եիմ ունենալով անոր հպատակներուն փողոսային իրաւունքն ու հաստատութիւնը. իսկ երկրորդը — Պրիւսիայի — կը փրկէր առաջին դաշնագրին բեկորները:

Նամակագիրը, այս ամենը թուելէ ետք, կ'անցնի մասնամիտ ընել մեծ սրխալը, զոր Երոպան գործեց, բարեկրօնումն ուն գործադրութեան հոգը վստահելով Սուլթանի մը, որ իր հպատակները գիտէ ջարդել, ու ա՛յդ կերպով կը հասկնայ բարեկրօնումներ գործադրելը: Հո՛ն է չարիքին բուն աղբիւրը. ժամանակն ու դէպքերը լայնօրէն հաստատեցին այս մեծ սրխալը. Երոպան, շա՛տ ու հասկցաւ, բայց, աւա՛ղ, դեռ գործին չի գար հասկցած ըլլալ:

Արդի ձեւը, կառավարելու ամենէն անոելի ու վստագաւոր ձեւն է. անանուն յետադիմութեան ձեւն է անի, որուն խարխալն է կոյր բունապետութիւն մը, եւ առանցքը՝ անձնական շահը: Վստակներու եւ երեսակայական հալածանքներու խոռոտ ամպերուն մէջը փաթթուած այս *նեժիւնը*՝ անջատուի սկզբունքն առաջ մղեց — ո՛չ թէ բա-

գաւորելու, այլ ընկնելու համար —  
բնակչութեան մէկ մասը միւս ան-  
սլաւեսպան զոհ մասին դահիճն ընելու  
աստիճան առաջ գնաց :

Քէմալ Պէյ, իր դժբաղդ երկրին  
անհանելի կացութիւնը պարզելէ ու  
ցոյց տալէ յետոյ թէ՛ երկրին բոլոր  
ցեղերը, Արաբ, Թուրք, Քուրս, Էնն,  
Հայոց պէս ու անոնց հետ քիչ թէ շատ  
անխտիր կը տառապին, կը յիշեցնէ  
Ճրանալի իր պատմական ազատասարի  
դերը, կոչում կ'ընէ անոր անեանախն-  
դիր զգացումներուն եւ այս տողերով  
կը վերջացնէ իր ա՛յնման շահեկան  
նամակը .

«Ճրանալի պարկետ ու անեա-  
հախնդիր դերը, զոր ամբողջ կէս դար  
է կը ետևարէ ինք Արեւելի մէջ, ար-  
տօնութիւն ու հարկադրութիւն իսկ կու-  
տայ անոր միւս երաշխաւորող սէրու-  
թեանց մասնակցութիւնը հրախրելու  
Համաժողով մը գումարելու, ըստ Պէր-  
լինի գոնկրէի նախատեսութեան, ձեռք  
առնել միջոցները, որ կ'ապահովեն  
գործադրութիւնը սոյն Դաւենագրին 23,  
61 եւ 62 յօդուածներով եղած յանձ-  
նառութեանց եւ հաստատել հսկողու-  
թիւն մը [contrôle] որ ամբողջական ար-  
դարութեան մը վայելումն երաշխա-  
ւորէ բոլոր ազգերուն ու ցեղերուն, ի  
գործ դնելով այդ յօդուածներուն հաս-  
տատումներուն համաձայն խմբագրուած  
կանոնները :»

— ԳՕՆՍԷՐ ԱԼՊԱՆ. Նոյ. ի 30 ին  
շաբաթ գիշերը ժամը 9 ին քաղաքիս  
Մօնթէնաթոյի արահը կը խոնէր հայ եւ  
օտար երկսեռ ընտրեալ բազմութիւն մը,  
հոն տեղի ունեցող Նուագահանդէսին  
առթիւ, զոր կազմա՛լեւած էր Տիար  
Արա՛ւ Աշպան, ողբացեալ Մ. Արնա-  
ւուտեանի որդին, ջութակահար հայ երի-  
տասարդը, որ մեզի ծանօթ է արդէն ա-  
պագայ խոսացող գեղարուեստագէտի  
տաղանդովը :

Նուագահանդէսը, միջազգային  
հանգամանքովն իսկ, շատ յաջող անցաւ  
ու գնահատուեցաւ :

Այս առթիւ յայտնելով Տիար Ա. Ալ-  
պանի մեր խնդակցութիւնները, կը  
խոստանանք այս գեղեցիկ նուագահան-  
դէսին մանրամասնութիւնները տալ յա-  
ջորդով :


— ՀԱՅՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆՆԵՐ. Կ. Պոլ-  
սէն կը ծանուցուի հայ հրոսախմբի  
մ'երեւումը Մշոյ մէջ : Այս պահուս  
թուրք զօրագնդերէն պաշարուած է  
այդ հրոսախումբը Մշոյ քաղաքի վան-  
քի մը մէջ, որուն տիրացած է : Ռու-  
սական փոխ-հիւպատոսը խռովու-  
թեանց վայրը գացած է :

Պոլսական աղբիւրէ հաղորդուած  
այս լուրը վերապահումով կը հրատա-  
րակենք, սպասելով տուգութեան :

Միւս կողմէ լուր կայ թէ՛ Սա-  
տուրի մէջ թուրք զօրքերուն ու Հայե-  
րուն միջեւ արհնոտ ընդհարում մը տեղի  
ունեցած է : Մանրամասնութիւնները  
կը պակսին :

— ՏԵՂԻՍ ԱՌԺ. ԹԱՂ. ԽՈՐՀՈՒՐԴԸ  
կ'իմանանք թէ ա՛լ պիտի դադրի պաշ-  
տօնէ : Մեր Առաջնորդը դեռ հոս պիտի  
մնայ, ընտրողական ժողովին կազմու-  
թեան եւ օրինաւոր Թաղ. Խորհուրդի  
մ'ընտրութեան գործողութեանց հսկելու  
համար :

### ԿԸ ԾԱՆՈՒՑՈՒԹ



Փիւնիկի արգոյ բաժանորդներուն  
որ այսուհետեւ, վճարումներու դիւրու-  
թեան ու կանոնաւորութեան համար,  
հետեւելով եւրոպական քերթերու օրի-  
նակին, Գանձումները պիտի կատար-  
ուին թղթատարական վարչութեան ձեռ-  
քով :

Կր յուսանք թէ այս կարգադրու-  
թիւնը զոհ պիտի թողու երկու կողմն

ալ, ազատելով խմբագրութիւնը գործակալներէ, իսկ արգոյ բաժանորդներն ալ բաժնեգիրը Մանսարոսքոյ դրկելու դժուարութենէն: —



— ՏԻԳՐՍՆ ԵՐԿԱԹԻ մահուան Գ. սարեմուսին առթիւ, որ հանդիպեցաւ ամսոյս 1ին կիրակի օրը, ՓԻՒՆԻԿԻ խմբագրութիւնը կ'արսայայտէ հրապարակաւ իր ամենախորին ու արագին ցաւակցութիւնները յաւէ ողբացեալ վաղամեռիկ բանաստեղծին անմխիթար մօրն ու երկու հարազատներուն:

Անսարակոյս ամեն զգայուն Հայ' արժով կը մասնակցի այս ազգային սուգին: Քանի' բոլորին սարեղարաները, ա'յնքան անելի խոր արմատ պիտի ձգէ յիշողութեանց մէջ մեծութիւնը կորուսին, գոր հայութիւնն ունեցաւ յանձին իր աննման զակին, որ պատշտի սիպարն եղաւ վիրաւոր հայրենասիրին:

Անմահութիւն իր յիշատակին...:



### ԱՇՆԱՆ ԵՐԳԸ



Դժգո'յն է դեմքը կապուտակ  
Կանարին.  
Նըւաղ շողեր անպերու սակ  
Կը մարին,  
Ու իմ հոգին սե'ւ կը հագնի,  
Երբ հեռուն  
Հորիզոնը կը մըքազնի.  
Մոյրուն  
Աչերուս մեջ յոյսը կուշայ,  
Մինչ արեւ  
Կուսայ վերջին, անցին վըրայ,  
Իր բարեւ...:  
Ի՞նչ կ'ըսէին հեծեծագին  
Տերեւներ,

Երբ արիւնտ շուսածագին  
Արե'ւն էր  
Որ դաշկահար կը սրսկեր շող  
Վերկն վար,  
Ու մերկ անտառը բունած դող  
Կը հեւար.  
Ի՞նչ կ'ուզէին ըսել բուսիտ  
Անսաղարբ,  
Երբ գետինը կը բախրըփեր  
Դեղի'ն զարդ...:

Ի՞նչ կը հծծեր սըղոյսը զով  
Երբ ծուփեր'  
Պոստ գետը փրփրուտ ի ծով  
Կը բափեր.  
Երբ անտուն այ հիւր երգակին  
Չե'ր լըսեր  
Ա'չ դոյրայիկը արագին  
Մնչոյ սեր.  
Ի՞նչ կ'երագեր արդեօք այն յուն  
Ուռեւին,  
Երբ մերկ ծառեր' շուրջը սարսուռ  
Մ'ունկին:

Մո'ւք էր ինծի, չ'էի մի վանգ  
Ըմբուներ  
Այդ խագերէն յոնարձազանգ'  
Որ շեռներ  
Ու ձորեր ոսք կը հանկին.  
Բընուրեան  
Հոգեւարքի երգերն էին:  
Յարիտա'ն  
Պիտի քրքուան անոնք հեշտին  
Ու սրտում,  
Անկեղծ բարգուտան իմ մեծ Վշտին  
Անպատում...:

Զով շո'ւնչ աշնան, այքը քոփիս  
Թափանցող.  
Փըչե', սընո'ւնչ կուզէ հոգիս.  
Թափե' գող  
Մրփիս վըրայ, ուր հրդե'հ կայ  
Չը մարող:  
Դարուններու գրկէն ինկայ  
Օսար հող,  
Օսար երկին, որուն ներքեւ

Չե՛ն սարիւր.  
 Բու հիւս՛նդն եւ, աւզի՛ն պարգեւ  
 Իւ՛ն երկիր:

Փարաւոնի սափակ երկրին  
 Աւազե,  
 — Ուր ողջերը խօշ, կը բերկրին,  
 Կը վազե  
 Երակներուն մեջեկն Նիւրթին  
 Թո՛յնը սեւ —  
 Նեկեցիկ գո՛ղը զիս մըրթին,  
 Անարեւ.  
 Ի՛նչ անարեւ, արեւ մ՛ուռնիս  
 Հրատեղաց,  
 Բայց, ա՛խ, անոր սակ սապանիս  
 Դունն է բաց...

Ո՛վ Եգիպտոս, խեղճներու  
 Դու կաղաղ.  
 Կ՛ուզեմ զրկեղ սարիչ հեռու  
 Ես խաղաղ.  
 Եղանակներդ աչ չո՛ւնին հար,  
 Ե՛ն պատրանք,  
 Կը բոլորին, օր, ամիս, ամ,  
 Ու իմ կեանք՝  
 Սառնոցի մեջ կը հոսի հոս  
 Անխորհուրդ.  
 Բոլորը Ձեւ, Կեղեւ, Խաւոս  
 Ու հառնուրդ:

Հո՛ն է կեանքը, ծովեկն անդին,  
 Լեռներով  
 Ու ձորերով գաւառած մըրթին  
 Կողերով  
 Հայրենի՛քը, վառարանին  
 Անկի՛ւնը,  
 Պարեզկն, այգին, վրտականին,  
 Ձերունը,  
 Որ վիրաւոր, բայց միշտ անյաղք,  
 Գրկաբաց,  
 Յանի մարտան սրդուն անբաղդ  
 Արսալած:

Ա՛խ, ո՛վ կուսայ ինձի, նորեկ

Ո՛վ կուսայ  
 Գեղիս աշունն, որ հեզօրեկն  
 Ման կուզայ  
 Բըրբի բըրբուր, ձորեկ ձոր, դաշտ  
 Ու պուրակ.  
 Որուն հեռ անձու է անկեղծ, հաշտ,  
 Ներդաշնակ.  
 Լեռա՛նս աշուն որ կը սուրայ  
 Չայրագին,  
 Միկնէր իջեկ հանգչի վրայ  
 Դեակին:

Այն գեակին ա՛յր կ՛ուզեմ  
 Ես դիտել  
 Բարսիներուն շարքը վրսեւ,  
 Ու նիրհել:  
 Տա՛ր զիս, Հովի՛կ աշնան, սար հո՛ն  
 Եւրդիս քով,  
 Իւ՛ն Պաղ-Աղբիւր ու գեղայտեկ  
 Սեզ տեւքով  
 Իւ՛ն Ձերունի սարն աչեհեր  
 Պերզիկայ.  
 Ըսե՛, Աշո՛ւն, իմ հին օրեր  
 Ո՛վ կուսայ...:

Ս. ԲԻԻՐԱՏ

ՀՐԱԽԷՐ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

1887                      ԺԶ. ՏԱՐԻ                      1902

“ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ..”

ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

Ուսումնաբերքս «ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐ-  
 ԵԱՅ», կը մտնէ իւր գոյութեան 16րդ շըր-  
 ջանը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Տարեկան Տանկասան եւ Այլուր 10 Ֆր.  
 ” Ռուսասան 4 ռբ.

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷՆ

A la Rédaction de la Revue  
 «HANTESSE»  
 Vienne (Autriche) VII 2 Mechilbaristengasse 4.

# «ԳԵՂՈՒՆԻ»

«ԳԵՂՈՒՆԻ» կը հրատարակուի երկու ամիսը մի անգամ :

Տարեկան Բաժնեգրինն է 3 Ֆրանկ 1 րբ. 50 կոպէկ :

Թերթէս գոյացած մաքուր հասոյթին կէտը առանց կրօնի խտրութեան, կը յաշկացնեն Ազգիս Որբիկներուն:

Ապառիկ բաժանորդագրութիւն բացարձակապէս չընդունուիր. Գինը կանխիկ է:

Բաժնեգրին, նամակ, եւ այլն, Ուղղակի հետեւեալ հասցէին յղելու է

«PAZMAVEB»

ST. LAZARE VENISE (ITALIE)

# ԴԵՂԱՐԱՆ

## ԱՓՐԻԿԵԱՆ

PHARMACIE D'AFRIQUE

Սոյն միաձեայ հաստատութիւնը վերջերս աւելի ճոխացուցած ենք բերել տալով եւրոպական ամեն տեսակ ընտիր գեղորայք, սրեսխալիքներ եւ հանքային թարմ ջուրեր :

Յաճախորդները կրնան ապահով ըլլալ գեղերուն խնամեալ եւ արագ պատրաստութեան ու գիներու չափաւորութեան մասին :

Դեղարանս կը յաճախեն Հայ եւ օտար բարեհամբաւ բժիշկներ ինչպէս նաև հանրութեան ծանօթ վկայեալ ու փորձ մանկաբարձներ :

# SALAMANDER

## ՍԱԼԱՄԱՆՏԸՐ

Ապահովագրական Ընկերութիւն ընդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Դրամագլուխ 3,125,000 ֆրանկ

Ամեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդհանուին ընդդէմ հրդեհի ինչպէս նաև Ծովային, Գետային և Յամաքային փոխադրութեանց արկածներու դէմ.

Դիւրամառչելի դներ և պայմաններ

Դիմել առ Ընդհանուր Գործակալ եւ Լիսազօր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՖԱԵԱՆ

Աղեփասնորիս, պզտիկ Մեհշիէ Ապուսարսա փողոց թիւ 10

# L'ALLIANCE

## Լ'ԱԼԻԱՆՍ

Ծովային Ապահովագրական Ընկերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Դրամագլուխ 5,000,000 ֆրանկ